քան գեղեցիկս յայսմիկ արտասուաց վայ  
րի. ապա զորպիսի ստեղծեալ իցէ յայն  
միկ տեղոյ. որէ աթոռ փառաց իւրոց.  
տուն մեծութեան իւրոյ. և բնակութի  
սրբոց իւրոց:

Եւ գերազանցութեան տեղոյն մտա  
ծեալ զպատուականութիւնն բնակողա  
ցըն. որոց բազմութիւնն և հարստութիւն  
գերազանցէ զհամայնիւք այնոքիւք. զորս  
մարդ խորհիլ կարէ: Եւ սէ սբ յօհան ա  
ւետարանիչն. թէ այն քան մեծ է բազ  
մութիւնն սրբոց. մինչ զի ոչ որ զնա թո  
ւել կարէ: Եւ սբն յիւնէսիոս արիս  
պագացին, թէ այնքան մեծ է թիւն հրեշ  
տակաց. մինչ զի. գերազանցէ զհամայն  
իւք նիւթականօք ստեղծածօք: Եւ սբն  
Խոսիաս աքուինացին հաստատէ զայս և  
ասէ: Եւ երկինքն մեծութեամբ իւրով  
գերազանցէ զմեծութեամբ երկրի. սպ  
ևս բազմութիւնն այնոցիկ հոգւոցն երա  
նելեաց. անհնապէս գերազանցէ զբազ  
մութեամբ համայնից ստեղծուած. նիւ  
թականացս. որք աստ յաշխարհիս բտա  
նին:

**Լ**որդ. այլ ինչ քան զայս զարմանալի կա-  
 թէ գտանիլ. իրաւի եթէ որ բարւոք  
 խորհիցէ զայսմանէ. ոչ կարէ կալ թարց  
 հիացման. և առանց սոսկալոյ: **Լ**որդ, ե-  
 թէ իւրաքանչիւր նք ևս փոքրագոյնն նո-  
 ցին. առաւել գեղեցկագոյնէ քան զբո-  
 լոր աշխարհս այս. ապա՛ որ քան գեղե-  
 ցիկ պարտէ լինիլ տեսութիւնն 'ի միասին  
 համայնից սրբոցն: **Լ**որդ, եթէ կենցաղա-  
 ւարիւն աստ ընդ բարեաց արանց այսքան  
 քաղցրէ. ապա՛ ունի քաղցրէ լինելոց ու-  
 ըրախանալն անդ ընդ հրեշտակաց. ցնծալ  
 ընդ հրեշտակապետաց. խնդալ ընդ իշ-  
 խանութեանց. բերկրիլ ընդ կարողութեց:  
 Տիրապետել ընդ անութեանց. ճառագայ  
 թել ընդ զօրութեանց: Սայծառանալ  
 ընդ աթոռոց: Օմայլիլ ընդ քերթէից.  
 Իւ բորբոքիլ սիրովն այ ընդ սերօքէից.  
 խօսելն ընդ առաքելոց. ընձեռել ընդ  
 մարգարէից. նա՛ և հաղորդակցիլ ընդ մար-  
 տիրոսաց. և ընդ ամենից սրբոց:

**Եւ** ևս, եթէ այսքան քաղցրէ ընկերակ-  
 ցութիւնն. և կենցաղաւարիւն ընդ սր-  
 բոց. ապա՛ որ քան զուարճալիէ լինելոց  
 տեսութիւնն. և զմայլումն ծայրագոյն բա-  
 րւոյն այնորիկ. զոր գովեն աստեղքն տ-  
 ռաւօտեան. որոյ ընդ գեղեցկութիւնն  
 զարմանան արեգակն և լուսինն, ևս յոտս  
 անկեալք երկիրպագանեն զօրութիւնք եր-  
 կնայինք: Սայ հաճելի պարտէ լինիլ տե-

տութիւնն ընդհանրականի այսորիկ բա  
 րւոյն. յորում կան համայնք բարիք, որ  
 և գոյով մի միայն. սակայնէ՛ ամ ինչ: Օյր  
 մացեալ թագուհին սաբբայ ընդ իմաս  
 տութիւնն սողմոնի աղաղակեաց ասելով:  
 Եւրանի՛ որք կան առաջիք. և վայելեն  
 զիմաստութիւնն քո: Եւ պա՛ զինչ լինիցի  
 տեսանելն զայն ծայրագոյն սողմոնն. զայն  
 անստեղծ իմաստութիւնն. զայն անհուն  
 մեծութիւնն. զայն անպատմելի գեղեց  
 կութիւնն. և զայն անչափ բարութիւն.  
 և զմայլել նովաւ միշտ: Եւ որ, այս է գոյա  
 ցական փառքն սրբոց. այս է վերջին վախ  
 ճանն. և նաւահանգիստն ամենից ցանկու  
 թեանց մերոց.

Ետ այսորիկ մտածեա՛ զփառս մարմնո  
 ցն սրբոց. որք ունեւոցեն զայսոսիկ  
 չորս եղականս պարգևս. այսինքն. Օնր  
 բութիւն. Օ թեթևութիւն. Օ անկրե  
 լութիւն, և Օ պայծառութիւն: Եւ այս  
 պայծառութիւնս եղիցի այն քան մեծ.  
 մինչ զի իւրաքանչիւր ոք ճառագայթեացե  
 ում զարեգակն: Եւ որ. եթէ մի միայն ա  
 րեգակն որ կայ 'ի մէջ երկնից. բաւակա  
 նէ առ 'ի լուսաւորել. և ուրախացուցանել  
 զբոլոր աշխարհս, ապա՛ զինչ արասցեն  
 այն քանք արեգակք և զամբարքն. Եւ այց  
 զինչ ասացից այլոց համայնից բարեացն  
 որք անդ գտանին: Օ ի անդ եղիցի ա  
 ռողջութիւն թարց տկարութեան: Եւ զա

տութիւն թարց ծառայութեան: գեղեց  
կութիւն թարց տգեղութեան: Ընմահու  
թիւն թարց ապականութեան: Ըռատու  
թիւն թարց չքաւորութեան: Հանգիստ  
թարց աշխատութեան: Խաղաղութիւն  
առանց խռովութեան: Իմաստութիւն  
առանց տգիտութեան: Զազումն առանց  
տաղտկութեան: Ուրախութիւն թարց  
տրտմութեան: Լաւատիւ առանց ընդդի  
մութեանն: Եւ ևս: ոմ ասէ Ծբն ( ) գոս  
տինոս: Ընդ եղիցի Ճմարիտ պատիւն,  
որ ոչ բարձցի յարժանաւորաց: Ե ոչ տրի  
անարժանից: Ընդ վարձն սրբոց եղիցին  
նոյն ինքն Ծ տուօղն նոցա զարքայութիւն  
( ) ի եղիցի նոցա հայր ողորմած: մայր  
գթած: Ծր նախախնամիչ: Ե վարդապետ  
ուսուցիչ: Իսկ Ծբն տեսցեն զնա թարց  
վախճանի: Սիրեսցեն թարց տաղտկու  
թեան: Ե գովեսցեն զնա առանց վաստա  
կելոց:

Ընդ տեղինէ լայնատարած: գեղեցիկ:  
Կայծառ: Ե ասպահով: Ընկերակցու  
թիւնն քաղցր Ե համեղ: Ընդ ժամանակ  
ոչ փոփոխի, այլ մի Ե նոյնէ կացութիւն  
նորա: Ոչ բաժանի իտիւ Ե ի գիշեր:  
այլ յարատեւ միով Ե միայնով յաւիտենա  
կութեամբ: Ընդ եղիցի գարունն մշտն  
ջենակաց, որ նորութեամբ Ե սիւգաւն հո  
գւոյն սրբոյ միշտ ծաղկի: Ընդ ամենեք  
եան ցնծան: ամենեքեան երգեն: Ե գո

վեն զայն ծայրագոյն բարին տուօղն ամե-  
նից բարեաց :

Իւն .

Ո՛վ սիրական մայրիմ Էմբաղաբդ ան . Ո՛վ  
օթեւան ապահով . Ո՛րեկիր բարի : ուր  
գտանին համայնք այնոքիկ . որոց ցանկան  
սիրտք մերք . Ո՛րբաղաբացիք հանգիստք ,  
և ժողովուրդք անտրտունջք : Ո՛հ . երբ  
արդեօք վերջացի պատերազմս այս . Լ՛րբ  
վախճանեսցին աւուրք քսորանաց իմոց :  
Լ՛րբ արդեօք եկեսցէ օրս այս : Լ՛րբ  
արդեօք երևեցայց աւաջի երեսաց ան  
իմոյ . Ո՛վ այն ինձ եղկելոյս . արտասուօք ա-  
րեան ողբալոյս . վասն սակաւուց և ան  
ցաւորաց փափկութեանց . հեռացայ՛իյեր  
կնից հանգստենէ . վս աշխարհիս իրաց ,  
որ արժանիէ մանաւանդ ատելութեան  
քան թէ սիրոյ . զրկեցայ իքէն մայրդիմ  
գեղեցիկ երուսաղէմ . Ո՛հ ցաւոյս զինչ  
առնեմ եղկելիս . զի զոր պարտէի ատել  
զայն սիրեցի . իսկ զոր պարտէի սիրել  
քամահեցի :

Բառաբարութիւն .

Ո՛րով հետե կոչեցեր զիս առ արքայու  
թիւնն քո ո՛վ անձ իմ . կամիմ և ցանկամ  
մտանել իննս . Ո՛վ ասն որոյ կամիմ այսու  
հետե զայն առնել . զոր մինչև ցայժմ ոչ  
արարի . և ոչ ևս առնել զայն . զորս  
մինչև ցայժմ արարի վասն սիրոյն արքայ  
ութեան : Հեռացայց ուրեմն յայսմանէ և  
յայսմանէ

յայնմանէ իրէ • որ արգիլէ զմուտս իմ  
յարքայութիւնն • և արարից զայս և զայն  
իրն • որ դիւրացուցանէ զընթացս իմ 'ի  
յերկինս •

Եւ շրթադրեմ •

Ընորհակալ լեր զայ վասն տալոյ քեզ  
զբարիս խորհուրդս •

Եւ զաչեա՛ զնա՛ զի տացէ քեզ զօգնութիւն  
'իւր • առ 'իգործ ածել զառաջագորու  
թիւնն •

Սատոյ նմա՛ զքեզ բոլորովիմբ • և այլն •

Եւ յիստորիոս երկնային ցաղան երեսուշէ՛ • շէ  
առ յիստորիոս երեսուշէ՛ •

Ստուն այ պայծառագոյն և գեղեցկա  
գոյն, սիրեցի զվայելչութիւն քո • և  
զտեղի բնակութեան այն իմոյ • Եւ քեզ  
հառաչէ տիւ և գիշեր պանդխտութիւն  
իմ • առ քեզ հեծեծայ սիրտիմ առ քեզ  
նային աչքիմ • զքէն խոկայ միտքիմ • և  
առ ընկերակցութիւնն բնակացն քոց ժա  
մանել ցանկայ հոգի իմ • Եւ զաչեմ զնա՛ որ  
արարն զքեզ • զի զիս մուծցէ 'ի քեզ •  
քան զի վասն քո արար զիս •

Եւ մանաւանդ դու ասանմա՛ և դու ա  
զաչեա՛ զնա՛ • զի արժանացուցէ զանար  
ժանս հաղորդակից լինել փառաց քոց • Եւ  
մայր երուսաղեմ աղաչեա՛ զտեղծօղնքո զի  
զիս ընդ բնակիչսն քո գասեսցէ • և գեղե  
ցիկ տեսլեանն քոմ արժանացուցէ վասն  
նր

Ճբ արեանն իւրոյ որով գնեաց զիս և զքեզ-  
տենս զպանտխտութիւնս իմ. նայեաց յաբ  
սորանս իմ. և առ սգաւորս դարձո՛ զողոր  
մածագին աչս քոյս: Սոլորեցայես որպէս  
զոչխար կորուսեալ յայսմիկ արտասուաց  
վայրի, ասանց հովիւն բարի. զի առաջ  
նորդեսցէ զիս յերկիր բարի. որ ես դու:

**Ո՛վ մարիամ. մարիամ. մարիամ.** կոյս սր  
բազնագոյն. Սայր Խյ: Թագուհի երկ  
նից. տիրուհի աշխարհի: Գանձարան հո  
գւոյն սրբոյ: Շուշան մայրութեան.  
Մարդ համբերութեան: Իրախտ ամենից  
փափկութեանց: Հայելի կատարեալ սի  
րոյ. և օրինակ անմեղութեան. աղաչեա՛  
ղմածին որդին քո վասն աքսորեցեալ գե  
րոյս:

**Ո՛վ համայնք սբբ և սրբուհիք,** աղաչեմ  
զձեզ վասն սիրոյն այնորիկ. որ անցու  
ցանելով զձեզ ընդ ալեկոծեալ ծով աշ  
խարհիս. հասոյց ի նաւահանգիստն երկ  
նից. աղաչեցէք վասն իմ. զի մի ընկդ  
մեալ կորիցիմ. այլ հողմովն օգնականուե  
ձերոյ. առ ձեզ ժամանեալ օրհնեսցեմ  
զստեղծողն իմ և ձեր յաւիտեանս յաւիտե  
նից. Բմէն:

**Սրածո-լիւն Եփես երբբ.**

**Յաղթս Բաբելոն-լեւանն Խյ:**



այսմիկ աւուր մտածեա զբարերա  
րութիւնն Խյ. որպէս զի տեսանե

լով զանչափ բարութիւնն նորա. դէպ ՚ի  
քեզ. առաւել բորբոքեսցիս սիրով նորա.  
Եւ թէպէտ անհունքեն բարերարութիւնքն  
այ. սակայն զերից միայն խօսիցուք. այս  
ինքն. զստեղծագործութենէ. զպահպա  
նութենէ. և զկոչելութենէ առ սբ հա  
ւատն:

**Ս**տածեալ ուրեմն զնախկին բարերարու  
թիւնն այ. որ է ստեղծագործութիւն.  
և տես թէ զինչէիւ նախ քան զստեղծա  
նիւն քո: Իրաւի ոչ այլ ինչէիւ. եթէ ոչ  
զուտ ոչ ինչ. որ չնչինէ քան զամենայն  
իւ. բայց թարց արդեան քո յորմէ թափու  
րէիւ. ամ ստեղծեաց զքեզ յոչնչէ ոչ թէ  
իքէն զկարիս ինչ ունէր. այլ միայն վս  
բարութեան իւրոյ անհնոյ: Եւ քեզ  
զմարմին զգայեարանօք իւրովք հանգերձ.  
նախ զհոգի հանգերձ երևք պատուակա  
նօք զօրութեամբք այնոքիւք. որոց մինն յի  
շողականութիւն. միւսն իմացականութի.  
և երրորդն կամք կոչի: Իայց գիտեա. զի  
տալով քեզ զայսպիսի հոգի. ետ ևս քեզ  
համանգամայն ընդ նմին զամ ինչ. քան զի.  
ոչ ինչ կատարելութիւն գտանի յայլ ամ  
ստեղծուածս. յորմէ ոչ գտանի ՚իմարդս  
Իւան զի համայնք ստեղծուածք կամ են  
բանական ուրի է հրեշտակն. կամ են ըզ  
գայեականք որպիսիք են անասունք. կամ  
են աճողականք. որպիսի է տունկն. և կամ  
գոյացութիւն միայն. որպիսի է քարն.

ԲՐԴ մարդս ընդ հրեշտակացէ բանական  
ընդ անասնոց զգայական. ընդ տնկոցն ա-  
շողական. և ընդ քարանց և փայտից է  
գոյացուածիւն :

Երկրորդ մտածեալ զբարերարութիւնն  
պահպանողութեան. և տես. թէ ոմ  
ամ գոյն քո կախի 'ի նախախնամութենէ  
այ : ॥ Է կարէիր կեալ կէտ մի. ոչ և կա  
րէիր շարժել զքայլ մի թարց օգնականու  
թեան նորա : Տես թէ ոմ ստեղծ զամ  
վասն քո. և 'ի ծառայութիւն քո. այսինքն  
զերկինքն երկնայնովք. զերկիրս երկրայ  
նովք. զյօդն յօդայնովք. և զծովն ծովայ  
նօք. 'Այեաց և տես թէ որ քան մար  
դիկք գտանին 'ի պէսպէս թշուառութե  
և 'ի զանազան տառապանս. զորս ևս դու  
կարէիր ունել. բայց ամ պահեաց զքեզ  
'Քանիք քանիք գտանին կոյրք. կաղք.  
համերք. խոյլք. ցաւագարք. աղքատք.  
և չքաւորք որոց կարէիր նմանիլ ևս դու  
եթէ ամ ոչ էր պահպանեալ զքեզ յայն  
ցանէ :

Երրորդ մտածեալ զբարերարութիւնն կոչելոյն  
զքեզ 'ի նք և ուղղափառ հաւատն քրիս  
տոնէութեան որ է մեծագոյն բարերարութիւն.  
քան զամ բարերարութիւնն. ԲՐԴ,  
զինչ լինելոցէր վասն քո. եթէ ծնանիցէ  
իր 'ի ծնողաց հեթանոսաց. և տիքականաց  
նեստորականաց. կամ արիոսականաց : Բայց  
ոչ արար ընդ քեզ այսպէս, այլ կոչեաց  
55 քաղցրաբար

քաղցրաբար զքեզ առ սբ հաւատն իւր.  
արար զքեզ որդի իւր՝ ի ձեռն սբ աւաղա  
նին. և հաղորդակից եօթեանց խորհրդոց  
սրբոյ եկեղեցւոյն: Վսանիք քանիք կան  
այժմ ի դժոխս. որոց մեղքն սակաւք և  
փոքրիքէն. քան զքոյսդ. սակայն ոչ  
համբերեաց, ոչ ետ զժամանակ նոցա ա  
պաշխարելոյ. և ոչ սպասեաց ապաշխարու  
թեան նոցա: Ի սկ. քեզ համբերեաց. ետ  
զժամանակ ապաշխարելոյ. և տալով քեզ  
զբարի խորհուրդս. և զներշնչմունս.  
սպասեաց քեզ մինչև ցայսօր:

Եւ յողբիկեն բարերարութիւնք յայտնիք.  
Եւ յաւ գոն այլ բարերարութիւնք ծա  
ծուկք և անյայտք. զորս ոչ կարեն գի  
տել եթէ ոչ նորա. որք առնուն. ևս  
գոն բարերարութիւնք այն քան ծածուկք  
և անյայտք. մինչ զի. ոչ ևս նա կարէ ի  
մանալ. և գիտել որ առնու. այլ միայն նա.  
որ առնէ: Վսանի քանի արդիւնաւորե  
ցար. թէ ան զքեզ լքիցէր յերեսաց իւ  
րոց վասն հպարտութեան. ագահութե.  
և ապերախտութեան քոյ. ուն արար ընդ  
այլոց. Ի այց ոչ արար: Օ քանիս չարիս.  
և կամ քանիս զսուիթս. և զպատճառս չա  
րեաց է բարձ ի քէն. բայց դու ոչ գիտես.  
Վսանիցս անգամ սատանան կամեցաւ խար  
բալել զքեզ ուն զցորեան. իսկ միջնորդն  
նոյ և մարդկան. արն մեր յն քս աղաչեաց  
զհայր վասն քո զի մի պակասիցէր հաւատ

քո : Եւ արեմք ճանաչել զբարերարութիւն  
 անորդ որ ծախան . որք կայանան յառնելն  
 մեզ բարիս . բայց ո՛ր կարէ ճանաչել զբարե  
 րարութիւնն պահպանողական . որք ո՛չ  
 կայանան յառնելն մեզ բարիս . այլ կայանայ  
 'ի փրկելն զմեզ 'ի չարեաց : Եւստի վա  
 րայտոցիկ . և վասն այլոց անհնից բարերա  
 րութեանցն այլ զորս ո՛չ գիտեմք և ո՛չ ճա  
 նաչեմք միշտ և հանապազ պատիմք շնոր  
 հակալ զայլ լինել և օրհնել զանուն սբնք  
 Եւս պարտէ իմանալ զպարաւանդութիւն  
 և զպարտաւորութիւնս մեր առ անձ :

Ի շն.

Տես ո՛վ ապերախտ հոգեկ իմ . թէ որ  
 քան բարի եղև անձ միշտ ընդ մեզ .  
 Տես զորպիսի . և զոր քանս արարնամեզ .  
 և մեք զինչ արարաք վասն նորա : Տես թէ  
 որ քան գթած և ողորմած եղև դէպ 'ի  
 մեզ . իսկ մեք միշտ ապերախտք եղաք դէպ  
 'ի նա . վայ ինչ վայ . թէ որպէս տմարդո  
 րէն առ ոոս կոխեցի զայս քան բարերա  
 րութիւնս . նա և անպատուեցաք . զշնորհս  
 նորա . Եւ մեծի ապերախտութեան զի  
 զորս ետ մեզ զի նոքօք սիրիցեաք զնա . և  
 ծառայիցեաք նմա . զնոյնս գործիս արա  
 րաք . առ 'ի վշտացուցանել զբարերարն  
 մեր : Եւ ո՛վ հոգի իմ . օրհնեսցուք և  
 բարեբանեսցուք զբարերարն մեր . Եւ  
 լիցուք այսու հետև ապերախտք . այլ հա  
 լաւտարիմք ծառայ նորա : Սբնք անորդ .  
 զայսու

հետեւ ոչ ծառայեսցուք անցն մերում որ  
զայս քան արար մեզ և վասն մեր:

Լաւոյնոյն-Բիւն.

Եստե հետեւ կամիմ ճանաչել զբարերա  
րութիւնն անցն իմոյ. և կամիմ ծառայ  
ել նմայ հաւատարմաբար: Եւ առ 'ի առ  
նել զայս. կամիմ 'ի բաց մերժել յինէն  
զայս և զայն իրն. որ արգելէ զիս. 'ի հա  
ւատարմաբար ծառայելոյ անցն իմոյ բարե  
րարի: Կամիմ օրհնել զանունն նքնն միշտ և  
ասել: () օրհնեցից զմեր յամ ժամ, յամ  
ժամ օրհնութիւնն նորա 'ի բերանիմ:

Լաւոյնոյն-Բիւն.

Եւ զայն զմե և այն որդէս ի վերոյ.

Եւ զմե զմեր հաւատ լինելոյ զմե. զմե անհոյ  
բարեբարութիւնն նորա.

Օ շնորհակալութիւն մատուցանեմ քեզ  
ամենակալ մե, որ զիս ոչ ստեղծե  
ցեր զքար. զօձ. և զայլ անասուն. այլ ա  
րարարեր մարդ 'ի պատկեր և 'ի նմանութի  
քո. և ետուր ինձ զհոգի անմահ. որ ոչ  
ինչ այլով իւրեք կարէ յագել. եթէ ոչ  
քեւ միայն:

Օ անիր ով հոգի իմ զարժանաւորութիւն  
քո. զի թագաւորն այն ընդ որոյ գե  
ղեցկութիւնն արեգակն և լուսինն զարմա  
նան. յորմէ սիւնք երկնից դողան, նա և  
յորմէ բոլոր երկիր պատկառեալ դողայ,  
նա ստեղծ զքեզ. 'ի բնակարան և 'ի պատ  
ճառ նք, և կամի օթեանիլ 'ի քեզ: Եւ զի  
աւրեմն

ուրեմն ո՞վ հոգի իմ, արի և ել ընդ առաջ.  
ցոյց զհեւրնկայութիւն ւայն քում, և մոյծ  
զնա՝ ի սենեակ քո:

**II**՝ Ը զարմանամ այն քան ընդ սաստիկ  
սէրն որդւոյ քոյ. որ արբեցեալ սիրով  
իմով. եթող զծոցն քո հայրական. ո՞չ  
գարշեցաւ ի բնակիւոյ ի կուսական որովայ  
նի, և լ. և ք. ամօք չարչարեցեալ վն իմ զիս  
որոնեաց. նա և յետ գտանելոյն զիս. ա-  
րեամբ իւրով գնեաց. որ քան զարմանամ  
զկուրութիւնս և ընդ տմարդի ապերախ  
տութիւնս իմ. քան զի զայս քան թան  
գապէս գնեցեալ հոգիս. կամեցայ մանա  
ւանդ սատանայի ծառայեցուցանել. քան  
թէ ի գիրկս փրկէին իմոյ հանգուցանել:

**( )** Գոհութիւնս մատուցանեմ անչափ  
բարերարութեան քում ով ստեղծող  
իմ. զի ո՞չ ստեղծեցեր զիս կոյր. կաղ-  
խուլ. ցաւագար. և համր. այլ ետուր ինձ  
զհոգի և զմարմին առողջ: Տուր ինձ ւեր  
զի մի այսու հետեւ մեղանչեցեմ զգայարա  
նօք մարմնոյս. կամ կարողութեամբ հոգ-  
ւոյս: Ի՞նչ յինէն զտգիտութիւն. և  
տուր ինձ զիմաստութիւն գառնալոյ առ-  
քեզ. զի միայն դքեզ սիրեցեմ. միայն քեզ  
ծառայեցեմ և միայն քեզ զմայլեցիմ ի յան  
զրաւ յաւիտեանս յաւիտենից. Ի՞մէն:

**I**՝ հա՛ այսոքիկէն նախկինք. Է. մտածու  
թիւնք. զորս կարես մտածել յիւրա  
քանչիւրում աւուր եօթն երեկին. կարի

Հարկաւորք են այսոքիկ մտածութիւնքս  
ամենից քրիստոնէից որք կամին կեալ  
քրիստոնէաբար. և լինիլ այրք կատարեալք  
սակայն առաւել Հարկաւորագոյնէ վասն  
նոցա՝ որք նորապէս կամին դառնալ առ  
աւծ. Վրան զի. այն մարդն որ կամի դառ  
նալ առ աւծ. պարտէ ունել զահ և զսէր  
այ. զգարչումն 'ի մեղաց. և ճանաչել զյու  
նայնութիւնն աշխարհիս. Իսկ զայսոսիկ  
ոչ դք կատարելապէս կարէ ունել Թարց  
մտածականի աղօթին. Եւ ասն որոյ մեծ առ  
պատճառաւ ասէ այն մեծ վարդապետն  
բելարմիոս, Թէ մարդկօրէն խօսելով  
ասեմ. Ինչն արինէ. Թէ դք կարիցէ կեն  
ցաղավարիլ քրիստոնէաբար. եթէ ոչ  
ծախիցէ յամենայնում աւուր գոնեայ ըզ  
ջորրորդ մասն ժամու միոյ 'ի մտածմունս  
աւծայնոց իրաց:

Ետեկն աստ երկոյտասան. այլք մտա  
ծութիւնք 'ի վերա՝ չարչարանացն քի.  
Եւ պատճառ գրելոյս է. ( ) Ի ոմ ասա  
ցինք 'ի վերոյ, ամենից քրիստոնէից պար  
տէ ունիլ զսէր. և զերկիւղն այ. Երդ 'ի  
վերոյ ասացելովք եօթեամբք մտածո քք  
պատճառին 'ի մեղ երկիւղն այ. Իսկ եր  
կոյտասանիւք այսոքիւքս զորս գրելոց եմ  
աստ. ծնանին 'ի մեզ սէրն քի. Վրան զի  
որպիսի քարացեալ սիրտ լիցի սիրտն այն.  
որ մինչ տեսցէ զայնքան դառնա կսկիծ չար  
չարանս. զորս անմեղաբարկընաց վն սիրոյ  
մարդկան. և ոչ սիրեսցէ զնա



\*\*\*\*\*  
**Մտածութիւն 'ի վերա սրբագու  
նից չարչարանացն քրիստոսի:**

**Ս**ի իի Իրածութիւն.  
Յոգտոս լոտոցմոն որից.

**Մ**ն մեր յմ նախ քան զտալն զմբ  
մարմինն և զպատուական արիւնն  
իւր աշակերտացն. յարուցեալ  
'ի սեղանոյն փածաւ զղենջակ. և սկսաւ  
լուանալ զոտս աշակերտացն. Բրդ հայ  
եաց ով հոգի իմ, և տես զորինակն խոնար  
հութեան, զոր տայ քեզ այսօր: Տես թէ  
ով է նա. որ առնէ զպաշտօնս այս այսքան  
անարդ. և քամահելի: Սպէ յմ քս որդին  
այ. ստեղծօղն երկնի և երկրի: Բրդ.  
զինչ առնէ, լուանայ զոտս աշակերտաց.  
և անօրէն յուդային.

**Ո**վ բարի յմ. վասն էր այդ քան խոնար  
հիս: Ով սպիտակք և անձայինք ձեռինք  
ոմի չգարշիք 'ի լուանալոյ զտղմալի ոտմն  
աղքատ ձկնորսաց. և մանաւանդ զոտս յու  
դային:

դայի. որք զկնի սակաւուց ընթանալոցք  
են առ 'ի վաճառել. Ե. արժաթից. Հաւա  
տալի է թէ, յորժամ սկսաւ փրկիչն լուա  
նալ զոտս յուդային. առաւել արտասուօք  
լուանալը. քան թէ ջրով. և գուցէ ասէր  
ևս Թրն մեր: Ո՛վ յուդա յուդա. ահա  
կամ աստ անկեալ յոտս քո. արա՛ ընդիս  
զոր առնելոցես. միայն թէ մի կորուսցես  
զհոգի քո. Ի՛ այց սակայն այս քան մեծ  
օրինակն խոնարհութեան ոչ եղև բաւա  
կան առ 'ի կակղացուցանելոյ զքարացեալ  
սիրտն նորա:

Ո՛վ հոգի իմ. տես թէ որ քան մեծ է  
եղեալ զօրութիւնն չար սովորութիւն:  
Եւս ևս բազմիցս նմանեցայ յուդայի. զի  
որ քան բարերարութիւնս արարեր ինձ.  
այն քանիցս զոտս իմ լուացեր. բայց ես  
ոչ իմացայ:

Երկրորդ. գոչով պետրոս առաքեալն  
խոնարհագոյն. քան զամենեսեան. էր  
բազմեալ յետին տեղւոջ. և մինչ եհաս  
Թրն առ նա՛ առ 'ի լուանալ զոտս նորա,  
զարմացմամբ մեծաւ աղաղակեաց ասելով.  
Տէր. դու կամիս լուանալ զոտս իմ. Ո՛չ  
ապաքեն դու ես ստեղծօղն երկնի և եր  
կրի: Ո՛չ ապաքեն դու ես այն, զոր ես ճա  
նաչեցի և խոստովանեցայ զքեզ որդի ան  
գոյ. կամիս լուանալ զոտս իմ. որ եմ ազ  
քատիկ ձկնորս մի, և ողորմելի մեղաւօր:

**Ո**՞յ ինձ. զի եթէ պետրոս գողով քեզինքն անարժան համարէր, ապա որ քան անարժան պարտիմ համարել ես զիս առ քե հաղորդութիւնն:

**Ե**րրորդ, ի վախճանի ասէ տէրն ցառա կերտսն: Եթէ ես որ տէր ե վարդապետեմ ձեր. լուացի զոտս ձեր. այսպէս ևս պարտէ ձեզ լուանալ զոտս միմեանց:

**Օ** այս արար տէրն մեր ոչ այն քան առ ի սրբել զմարմնաւոր աղտս յոտից նոցա. որք ոչ կարեն զհոգի աղտեղացուցանել. որ քան արար առ ի ուսուցանել մեզ զերիս իրս: Եւ թէ պարտիմք նախ քան զհաղորդելն մեր լուանալ զհոգիս մեր յաղտից մեղաց ջրովն արտասուեաց: Եւ երրորդ. թէ պարտիմք խոնարհել ևս տոր նագուանից մերոց: Երրորդ. թէ պարտիմք առնել զբարիս ևս թշնամեաց մերոց. ոմ արար աստ տէրն յուդայի: Բայց վայ ինձ. զի միշտ զհակառակ սոցին առնեմ:

**Ե**ւ զիս հայցելոյ յոյ շոնորհութիւն.

**Տ**ի՛մ իմ. զինչ ունիմ զոր ոչ առ ի իբէն իսկ եթէ առ ի. ապա վնէր պարծիմ: Որ որ իբարեացն իբէն տուեցելոց ոչ զփառս քո. այլ զփառս իւր խնդրէ. նա գողէ և աւազակ. և նմանէ սատանայի. որ կամեցաւ զփառս քո գողանալ: Բնդէր հպարտանամ ես հողս և մոխիրս: Բնդէր բարձրամտիմ ապականութիւնս և կերակուրս

կուրս որդանց։ Բ՛մաչեաց հոգի իմ ամա  
 չեաց․ զի որդին այ զինքն որդն կոչե  
 ասելով դաւթիւ․ Եւ եմ որդն և ոչ  
 մարդ․ իսկ ես որ հաւաստեալ որդեմ․ և  
 նախատինք մարդկան․ մեծ ոմն զիս հա  
 մարիմ։ Բ՛ղաչեմ զքեզ հայր երկնաւոր․  
 յորժամ յառնէ 'ի յիս շարժումն իմն հպար  
 տութեան․ յայնժամ պարգևեա՛ ինձ ըզ  
 շնորհս խոնարհութեան․ զմայրն ամենից  
 առաքինութեանց, վասն սիրոյն խոնար  
 հագոյն որդւոյ քոյ։ Բ՛րա՛ տր․ զի ճանա  
 չիցեմ զքեզ․ և ճանաչիցեմ զիս․ զի որ  
 զքեզ բարւոյք ճանաչէ․ և սիրէ զքեզ․ և  
 որ սիրէ զքեզ․ քամահէ զինքն․ իսկ որ քա  
 մահէ զինքն, առաւել սիրէ զքեզ քան  
 զինքն։ Բ՛րա՛ տեր զի յամ աղմկէ հոգ  
 ւոյ․ և մանաւանդ 'ի մեղաց հպարտութե  
 և սնապարծութեան ազատեցեալ․ հեզու  
 թեամբ և խոնարհութեամբ քեզ ծառայ  
 իցեմ, այժմ և 'ի յաւիտեան։ Բ՛մէն։

Ս՛րաբոնի երկրորդ։ Է՛րզնգո ստիմոնելոյ  
 մորնոյ եւ որեմն որեւան։



կնի որոյ լուաց արն մեր զոտս  
 աշակերտաց․ դարձեալ բազմե  
 ցաւ ընդ նոսա՛ 'իսեղան։ Բ՛ւ  
 առեալ զհացն 'ի ձեռն իւր օրհնեաց է  
 բեկ և ետ նոցա ասելով։ Բ՛ռէք կերէք․  
 այս է մարմին իմ որ վասն ձեր և բազմաց  
 բաշ․ և այլն։ 4 7 64 Ս՛րա

Եւ զա

**Մ**տածեալ հոգի իմ զաստիկ սէրն յն  
դէպ իմարդիկս։ Բան զի յայնմիկ և  
'ինոյն ժամանակոջն։ յորում յուզաւ լարէր  
զորոգայթ մատնողութեան։ քահանայա  
պետքն խորհէին սպանանել զնա իմէջ  
երկուց աւագակաց, հիւսանքն պատրաստե  
ին զխաչն։ ի դարձոցն շինէին զբւեռ  
սըն։ և իտունն պիղատոսի զինւորքն զու  
գէին զփշեայ պսակն։ ի մի և ինոյն ժա  
մուն։ քս պատրաստէր նոցա զանմահաբար  
կերակուր իմարմնոյ և յարենէ իւրոյ։ Ը  
անպատմելի սէր։ Ը հանհուն մարդասի  
րութիւն քի։ Եւ զայս արար առ իգոր  
ծով կատարել զոր յառաջմէ ասացեալէր  
Բարի արարէք ատելեաց ձերոց։

**Ե**թմ ասա ո՞վ հոգի իմ. արարեր ար  
դեօք զայս ըստ օրինակին փրկչին քոյ.  
սիրեցեր զթշնամին քո. զբարիս արարեր  
ատելեաց քոց։

**Ե**սէ նք աւետարանն, թէ նախ քան  
զբեկանելհացին. գոհացաւ զերկ  
նաւոր հօրէն, առ ի յուսուցանել  
մեզ. թէ նախ քան զմատչումն ոչ միայն  
առ նք հաղորդութիւնն. այլ և յառաջ  
քան զմարմնաւոր կերակրոյ ուտելն պար  
տիմք համբառնալ զմիտս առ տուօղն ա  
մենից բարութեանց և օրհնել զնք անուն  
նորա։

**Ե**րարեր այսպէս. ոչ. այլ հանգոյն խո  
ղից կերեր զեխջերուն թարց հայելոյ

քո 'իծառն. վասն որոյ արդիւնաւորեցար  
բազմիցս, թէ չորանայցէր ծառն ողորմու  
թեան վասն քո:

**Երկրորդ.** Օ կնի որոյ էառ զբաժա  
կըն. գոհացաւ զաստուծոյ ասելով:

**Երբէք** 'իսմանէ ամենեքեան այս է ա  
րիւն իմնորոյ կտակի. որ հեղանի վասն  
ձեր և վասն բազմաց, 'ի քաւութիւն, և  
'ի թողութիւն մեղաց:

**Ստածեալ** ով հոգի իմ. զի արն մեր յս  
քս հաստատեաց ըզ խորհուրդս զայս.  
ոպ զի իցէր յիշատակ մեծագունից զար  
մանալեաց իրաց: Օ ի յայլ իրս զորս արա  
րըն. յայտնի միայն իր իմն իւրոյ անձայնոյ  
կատարելութեան. բայց յայսմիկ խորհրդո  
շըս յայտնին բազումք կատարելութիւնք.  
որոց գլխաւորքն են երեք. այսինքն կարո  
ղութիւնն անհուն. իմաստութիւնն զար  
մանալի. և բարութիւնն անճառելի. ըն  
խորհրդոջս այսմիկ երեւի կարողութիւնն  
անհուն. զի 'ի ներքոյ տեսակին հացի և  
գինոյ կայ բոլոր մարմինն. բոլոր արիւնն  
բոլոր հոգին. և բոլոր անութիւնն:

**Երեւի** իմաստութիւնն զարմանալի. զի ե  
գիտ զկերպ մի հեշտ. և զհամեղ. որ ով  
միաւորէ զմեզ ընդ ինքեան: Օ ի ոչ ինչ  
իր այնքան միաւորի ընդ մարմնոյ մերում.  
ոպ կերակուրն և ըմպելին: Այտնի ևս  
բարութիւնն նորա անճառելի. քան զի  
միջնորդութեամբ սրբոյ հաղորդութեա

Հաղորդէ մեզ զամ հոգւորս բարին, ե  
զկեանս յաւիտենականս. վասն որոյ ասաց  
Որ ուտէ 'ի հացէս այսմանէ. կեցցէ յաւի  
տենան:

Երրորդ. մտածեալ զբանն այն. զոր յե  
տոյ ասաց: Օայս արարէք 'ի յիշատակ իմ:

Մտածեալ ետես. թէ ոմ ցանկայ քա  
ղի ունեցիմք զնա 'ի մօտի: Ոհ թէ որ  
քան մեծէ սէրն քի դէպ 'իմք եկեղեցին  
այսինքն դէպ 'ի հոգւս հաւատացելոց.  
Երդ կամէր չուել յաշխարհէս առ հայր  
'ի յերկինս. և ոմ զի մի ծնանիցէր մոռա  
ցումն իւր. եթող 'ի յիշատակ զմք խոր  
հուրդն մարմնոյ և արեան իւրոյ, յորում  
մնայր նոյն ինքըն առ 'ի զարթուցանել  
առ ինքն զսիրտն հարսին իւրոյ:

Իսկ 'ի միւս կողմանէ մտածեալ հոգի իմ  
զապերախտութիւնն քո. որ մոռանաս  
զնա. որ գողով ինքն 'ի յերկինս. կամի  
մնալ ևս ընդ քեզ 'ի յերկրի վասն անպատ  
մեւոյ սերոյ քո:

Ըջիւս նախ քան զմի հողորդո-նիս:

Սարսափիմ և դողամ ոմ թագաւոր հրեշ  
տակաց. մինչ մտածեմ զճնշին նուա  
տութիւնն իմ. և զահարկու մեծութիւնն  
քո. Եւամիմ մատչել առ քաղցրագոյն խը  
րախճանն նք մարմնոյ. և պատուական ա  
րեան քոյ. բայց մինչ նայիմ 'ի գերն մեղս  
աւանձ հոգւոյս. և 'ի հանդերձն անմեղոս

Թեան. զոր 'իմկրտութեան առի. զոր  
և սյժմ մեղօք աղտեղացուցի և պատառո  
տեցի. ոչ իշխեմ համարձակել, 'Եկեցաւ  
և փտեցաւ վերքիմ յերեսաց անզգամութե  
իմոյ. իօկ ես ողորմելիս անձկացեալ յա  
մենուստ. ոչ գիտեմ թէ զինչ ասացից.  
Վատեալքեն զիսնեղութիւնք յամենուստ  
և վիշտք գժօխոց գտին զիս. Օ ի արդ  
կացից կեալ Թարց մարմնոյ և արեան քոյ.  
զորմէ ասես. Եթէ ոք ոչ կերիցէ զմար  
մին որդւոյ մարդոյ. և ըմպիցէ զարիւն  
ճորա. ոչ ունիցի զկեանս յինքեան. իսկ  
յաղագս ծանունց և բազմապատկացս մե  
ղաց ոյք բարձրացան քան զգլուխ իմ. դո  
ղացուցանեն զիս բանքն առաքելոյն քոյ.  
որ ասէ. Որ ոք կերիցէ զհացս այս. և  
ըմպիցէ զբաժակ օն անարժանապէս.  
պարտական եղիցի մարմնոյ և արեան օն.  
Ս'երանելի և գթած անութիւն. Ս'ահար  
կու մեծութիւն. Ս'անճառելի և անքններ  
լի սրբութիւն. Տ'ո' երթայց յողւոյ քում  
մէ. և յո' փախեայց յերեսաց քոց. Օ ի դո  
ւզ սիրտս և զերկամուսնս քննես. և խոր  
ինք խորհուրդք խիղճմտաց բացեալք և  
մերկապարանոցքեն առաջի քոյ. Մ. քեզ  
գիմեմ առ 'ի լուանիլ. ո՞վ աղբիւր ողոր  
մութեան. Մ. քեզ առ 'ի բըժշկիլ փու  
թամ. ո՞վ գթած բժիշկ սամարացի. Մ.  
քեզ գիմեմ ար յն. յորմէ թէ պէտ ուն 'ի  
դատաւորէ դողամ. սակայն ուն 'ի փրկէ  
68 յուսադրիմ:

յուսադրիմ: Վրէզ ցուցից տը իմ զվերս  
իմս: Վրէզ յայտնեցից զամօթս իմ: Տե  
սանեմ տը իմ զմեղս իմ մեծամեծս և բա  
զուսմս. և դողամ. իսկ հայելով 'ի քաղց  
րութիւնն և յողորմութիւնն քո. որ ոչ  
գոյ թիւ. յուսալ 'ի քեզ համարձակիմ:  
Հայեաց առիս տը յն քս թագաւոր յաւի  
տենական փառաց: Հայեաց և ողորմեաց  
ինձ. ո՞նք և մարդ յաղագս մարդոյս մար  
մնով խաչեցեալ: Հայեաց 'ի սրբազնագու  
նեղ մարմինն քո. 'ի վերայ խաչին բւեռե  
ցեալ. տիգաւ խոցեալ ձաղանօք հարուա  
ծեցեալ. նա և անողորմաբար վիրաւորե  
ցեալ: Եւ իշեմ տը զարեան քրտունսն կայ  
լակնաձև յերկիր հեղեալ. նոյն գթութիւն  
որ զքեզ յերկնից յերկիր իջոյց եղիցի բա  
րեխօս առ քեզ:

Ստորագրութիւն երբորդ ի վերս Հարչարանոցն գտի.  
Յաղագս ողբեցոյն հին ի պարգեշին:



Արտեալ տըն մեր զայն խորհրդա  
ւոր ընթրիսն, եւ աշակերտօքն  
իւրովք 'ի լեառն ձիթենեաց,  
առ 'ի կալ յաղօթս նախ քան  
զմտանէն իւր 'ի պատերազմն չարչարանաց  
իւրոց: Եւ այսու ուսոյց մեզ. թէ յամ  
վիշտս. և 'ի նեղութիւնս մեր պարտիմք  
դիմել առ նք աղօթքն. որոյ զօրութիւն  
թեթեանան վիշտք մեր. և յաղթեմք ամե  
նից ընդ դիմութեց:

Տարաւ ընդ ինքեան զերիս սիրական աշա  
կերոս, այսինքն զպետրոս, զյակոբոս,  
և զյոհաննէս. զի ունի սոքա յառաջն տե  
սին զփառս այլակերպութեան 'ի լեառն  
Թաբոր. և ևս տեսանիցելին զտրտմութիւ  
նորս և զվիշտքս. զորս ունելոցէր վասն  
մարդկայնոյ ազգիս: Եւ առ 'իցուցանել  
Թէ ներսին նեղութիւնն ոչ էր փոքրա  
գոյն քան զնեղութիւնն զոր արտաբուստ  
կրէր. ասէ ցաշակերտսն զցաւագին բանն  
այն: Տրտումէ անձնիմ մինչև 'ի մահ. կա  
ցէք աստ, և հսկեցէք ընդիս:

( ) այս մինչ ասաց տրն մեր. հեռացաւ  
Ծաշակերտացն սակաւ ինչ, և անկեալ  
'ի վերա երեսացն. սկսաւ մեծաւ պատիւս  
ռանօք աղօթել առ հայր և ասել: Հայր  
անցոյ յինէն զբաժակս այս եթէ հնարէ.  
բայց ոչ եղիցի կամն իմ այլ քոյդ: Տես  
ով հոգի իմ զկերպ և զեղանակն աղօթե  
լոյն քի: Ընկանի 'ի վերա երեսաց ուն զա  
նարժան մեղսապարտ, որ ոչ իշխէ յերկինս  
վեր հայիլ: Ընկաւ 'ի վերա երեսաց առա  
ջի հօրն երկնաւորի. որ բառնալոցէր ըզ  
մեղս աշխարհի 'ի Թիկունս նորա: Ընկաւ  
յերկիր 'ի վերայ երեսաց. առ 'ի յօրհնել  
զերկիր. և բառնալ զանէծս 'ի նմանէ.  
զփուշ և տառասկ բուսուցանելոյ: Բայց  
կարի անագան օրհնես զերկիր ով յս. զի  
արդէն բուսուցեալէ զփուշ առ 'ի պսա  
կել զցլութի քո: Ըրդեն բուսուցեալէ  
զերկաթա

զերկաթահանս. յորոց ելեալք գեղարդն  
 և բեռք Թափանցեացին իմարմին քո ան:  
 Եւ զերկուս իրս ուսանիմք ո՛վ հոգի իմ:  
 Սախ. Թէ պարտիմք 'ի համայս նեղուեա  
 մեր. մեծաւ խոնարհութեամբ աղօթել.  
 և այսու գիմել առ ձեռք. Եւ ընդդէմ պար  
 տիմք համակերպել զկամս մեր ընդ կա  
 մացն ան:

Եւ ընդդէմ մասն: Եւ ընդդէմ անգամ կրկն  
 եաց զբանս այս: Հայր իմ. անցո՛ յի  
 նէն զբաժակս այս: Տես. ո՛չ ասէ իմ.  
 կամ ձեռք. այլ ասէ Հայր. առ 'ի գութ  
 շարժել զնա: Սեծաւ աղաղակաւ և ա  
 ռատ արտասուօք աղօթէ, առ 'ի ուսու  
 ցանել մեզ. Թէ որ քան մեծէ նեղութիւն.  
 և որ քան մեծէ վիշտն յորոց աղաղակել  
 ցանկամք. այն քան մեծ պարտէ գոլ ար  
 տասուքն և հառաչանն 'ի յաղօթս: Եւ ընդ  
 անգամ զմի և զնոյն բանն ասաց. յերրոր  
 դումն երկարապէս աղօթեաց. առ 'իցու  
 ցանել. Թէ յորժամ աղօթիւք ո՛չ առ  
 նումք շուտով զայն զոր խնդրեմք. ո՛չ է  
 պարտ յուսահատիլ. այլ յարատեւել յա  
 ղօթս:

Եւ ընդդէմ մասն: Յարուցեալ յի յաղօթի  
 ցնէ եկն առ աշակերտսն. և ետես զնա  
 զի քնեալքէին: Տես ո՛վ հոգի իմ. Թէ  
 յորպիսի տառապանս գտանն սիրական  
 փեսայն քո յմ: () ի աղաչէ զհայրն իւր  
 երկնաւոր. և նա ոչ տայ պատասխանի:

Կամի ունիլ զմիսիթարուծիւն ինչ յաշա  
կերտաց. իսկ նոքա քնին. 'Վառնայ դար  
ձեալ յաղօթս. ոչ ևս անդ գտանէ զսփո  
փումն. Որպիսի պարտեզ եղև պարտեզն  
գեթսեմանի վասն որդւոյն ւայ. Ո՛հ թէ  
որպիսի դառնէ պտուղքս վասն յի. ո՛վ  
պարտեզ գեթսեմանի. Այլ յայլ պար  
տեզ գտանին փափկութիւնք. իսկ աստ  
ոչ այլ ինչ գտանի. եթէ ոչ ցաւ և հեծու  
մն վասն որդւոյն մարիամու:

Չորորդ մասն: Լմուտ յն ևսկսաւ եր  
կարապէս աղօթել. և ելին քրտուէք  
արեան 'իմարմնոյ նորա, այն քան առատ  
մինչ զի հեղոյր առատապէս յերկիր. ուս  
տի իջեալ հրեշտակ յերկնից զօրացուցա  
նէր զնա:

Բնա պատճառն քրտեանն արեան: Ետես  
մաքրագոյն մտօքն զմմ դառնակսկիծ տան  
ջանսն. զորս հրեայքն ընդ դէմ փափկա  
գոյն մարմնոյ նորա պատրաստէին. Ետես  
զի յուդա կորնչէր. և բազումք ևս վասն  
որոց չարչարելուն տէին ընդ ունելոցք ըզ  
պտուղ չարչարանաց նորա: Ետես զի բա  
զումք չարք քրիստոնեայք մեղօք և ապե  
րախտութեամբք առ ոտսէին կոխելոցք  
դմբ արեւնն նորա: Եւրդ զայսոսիկ ւամ,  
մինչ մտօք երևեցոյց ինքեան, սկսաւ տար  
րական նիւթն խառնակիլ. մարմին բա  
ցեալ ամենուստ արտաքս եհան զքրտունս  
արեան: Եւրդ, մտածեալ և տես ո՛վ հոգի  
իմ.

իմ. Թէ որ քան սաստիկէր չարչարանքն  
 ան. Օ ի եթէ 'ի հեռուստ մտածելն  
 զայս արար. ապա յորժամ իսկապէս կրեաց  
 զչարչարանս 'ի մարմնի, ուն սաստիկէր լի  
 նեղոց. Հայեաց և տես մաացդ աջօք զայն  
 անձային երեսն արեամբ և տղմով աղտո  
 տեցեալ. Տես Թէ ուն գաբրիէլ հրեշտա  
 կապետն մեծաւ հոքսունակութեամբ ծա  
 ուայէ և մխիթարէ զնա. զի կարացէ յոտն  
 կալ. Ով տր իմ յն քս. այդ ջերմեռանդա  
 գոյն աղութն քո. դատապարտէ զիս վն  
 մեղկութեամբ աղութելոյս. Հայեաց ով  
 հոգի իմ յաղութելն քի և ամաչեաց. զի  
 ոչ միայն զքրտունս արեան. այլ ոչ ևս  
 զկաթ մի արտասուաց հեղուս յաչացդ.

ԼՆԹԻ՜ շնորհակալութիւն զսէ վն շնորհարանց նրո

Ո՛գեղեցկագոյն քան զամ որդիս մարդ  
 կան. զի արդ այդ քան տգեղացար  
 մարմնով առ 'ի բառնալ զտգեղութիւնս  
 հոգւոց. վիրաւորեցար վասն անօրէնու  
 թեան մերոյ. և եղեր զուարակ անուշա  
 հոտ առաջի յանիտենականի փառացն հօր  
 Օ այս ամ արարեր առ 'ի դարձուցանել  
 զցասումն նորա 'ի մէնջ և առ 'ի բազմեցու  
 ցանել զմեզ յերկնային հանգիստն. Լճոյ.  
 Եվ բարի յն. զորպիսի շնորհս քեզ մատու  
 ցից ես անարժան հոգս և մոխիրս. Օ ինչ  
 արդեօք վասն փրկութեան իմոյ պարտէ  
 իր առնել և ոչ արարեր. Ի Թաթ ոտնոյդ

մինչև 'ի գագաթ գլխոյդ զքեզ 'ի ջուրն  
 չարչարանաց ընկղմեցեր. զի զիս անտուստ  
 հանիցէիր: Ս ասն որոյ արժանիես տրյս.  
 որ մեռար և ազատեցեր զմեզ արեամբ քով.  
 առնուլ զգօրութիւն փառք և պատիւ:  
 Վեզ երկրպագանեմ ճշմարտիդ այ: 'ի  
 քեզ յուսամ. և զիս 'ի քեզ յանձն առնեմ:  
 Ըրա վասն նք մահուան քոյ. զի մեռանի  
 ցեմ ըստ մարմնոյս. և կայցեմ ըստ հոգւոյս  
 ով փրկիչիմ. և անձ իմ:

Ստածութիւն չորսրդ ի վերա հարչութանայն ԳԷ.  
 Ճաշագէտ մարտութեանն յոգացի:



որժամ աւարտեաց տրն զաղօթն  
 ասէ ցաշակերտան. արիք երթիցուք  
 ահա մերձեցաւ, որ զիս մատնելոց  
 նէ: Ճորժամ իմացաւ յս 'ի հրեշտա  
 կէն թէ հօր այ կամքներ զի մեռանիցեր  
 իսկոյն աքսորեաց յինքենէ զամ երկիւղսն.  
 և տեսեալ զմատնիչն. ոչ փախեաւ. ուն  
 զվարձկան. ոչ ևս թաքեաւ, այլ որպէս  
 զբարի հովիւ. ել ընդ առաջ մարդակերպ  
 գայլոց: Ստածեալ զայն բանն զոր տրն  
 ասաց: Ըրեք երթիցուք: Ըրեք. զի յու  
 դա ոչ թոյլ տայ ձեզ ննջել: Եկայք և  
 առեք զյետին օրհնութիւնն իմ. զի այս  
 ե ժամն յորում ինձ պարտէ մեռանիլ:  
 Ըհա ես երթամ մեռանիլ վասն ձեր. իսկ  
 ձեզ յանձնեմ զտրամագին մայրն իմ մա  
 ըիամ:

ընամ. զոր պարտէք մխթարել. Այս  
ասացեալ գրկեաց զաշակերտսն և արձա  
կեաց. Ստածեալ թէ որ քան զարտասուս  
հեղուլ պարտէին սբք առաքեալքն. կամ  
որ քան պարտէին ողբալ վասն գուժալի  
համբաւոյս այսորիք:

Սասն երրորդ. Լա մինչև զայս խօսէր  
ահա մինն յթիանիցն եկն. և ընդ նմին  
ամբոխ բազում սրօք և բրօք. որ մերձե  
ցաւ առ յս և ասաց. Ողջեր վարդապետ  
և համբուրեաց զնա. իսկ յս պատասխա  
նեալ ասաց ցնա. Սասն ոյր եկիր բարե  
կամ. Ստածեալ. զի յուդա որ յառաջ  
նէր առաքեալ. և առնէր զհրաշս որպէս  
զայլ առաքեալսն. եղև գլուխ և առաջ  
նորդ սատանայի ժողովոյն. Տես թէ որ  
քան դժուարինէ անկումն նոցա. որք  
ժամանակ ինչ սրբաբարիցեն կենցաղաւա  
րեալք և առեալք իցեն զմեծամեծ շնոր  
հըս յայ. Տես զբարութիւնն յի այսօրեւք  
դ. եղանակօք, նախ թոյլ տայ յուդայի  
մերձենալ առ ինքն. Լրկրորդ. կոչե  
զնա բարեկամ. որ թէպէտ ոչէր բարե  
կամ. սակայն եթէ յուդայ կամիցէր. յս  
պատրաստէր առնել զբարեկամութիւն.  
Լրրորդ. ցուցանէ նմա զչարութիւն մե  
ղաց նորա կարճաւատ բանիւ ասելով.  
Համբուրիւ մատնես զօրդի մարդոյ. Լրդ  
աստ մխթարիր հոգի իմ. քան զի. եթէ  
այս քան տիրով վարի յս ընդ թշնամւոյն.

ապա՛ զինչ արասցէ քեզ. եթէ ծառայի  
ցես նմա՛: Եւ ևս զայս առնելով ուսու  
ցանէ քեզ. թէ ոչ է պարտ չարախօսել  
զթշնամւոյն. և խստաբար վարիլ ընդ նմա.  
այլ պարտիս ցաւակցիլ նմա՛. Տես թէ արա  
րեր զայս:

**Ս**ասն երրորդ. Լսէ յս ցամբոխն. Օհ  
խնդրէք. ասեն. Օյիսուս նազօրա  
ցին: Լսէ յս. Ես եմ. Օայս լուեալ  
ամբոխին. չոգեալ յետս զարկան յերկիր:  
**Ս**տածեա՛ հոգի իմ. թէ որ քան զանա  
զանութիւն գտանի 'իմէջ հնոյն և նորոյն  
աղամայ. Օի հինն աղամյորժամ լուաւ  
զձայնն այդ գատաստանին. Լգամ ուրես  
թաքեաւ. իսկ նորն աղամն քս ընդ առաջ  
ելանէ. և յայտնէ զինքն նոցա ասելով.  
Ես եմ. Լրդ. եթէ ձայնս այս այսքան  
քաղցր: Ես եմ. ահաբեկեալ սարսափե  
ցոյց զյուդա՛ և զզինուորսն. ապա՛ զինչ է  
առնելոց յաւուրն գատաստանին ձայնն  
այն: Երթայք յինէն անիծեցեալք: Տես  
զանպատմելի սէրն քի դէպ 'ի յառաքեալ  
սըն. զի մոռանալով զվիշտն իւր. միայն  
հոգայ զնոսա ասելով ցզինուորսն: Եթէ  
խնդրէք զիս. թոյլ տուք դոցա՛ երթալ:  
Լմաչեաց ով հոգի իմ. որ միայն վասն  
քոյ. այլ ոչ վասն այլոյ ուրուք հոգաս.  
որպէս թէ դու միայն իցէիր յաշխար  
հիս:

**Ո**վքաղցրագոյն տը իմ յն չես. որ վասն  
 իմ անարժան մեղաւորիս. ետուր զմար  
 մինքո հարուածողաց. և զերեսդ քո ոչ  
 դարձուցեր յապտակողաց: Եւ զեր գին հո  
 գւոյ իմոյ. և պատարագ փրկական. Եւ րաւի  
 զցաւս մեր դու բարձեր. և զմեղս մեր  
 դու տարար: Լ. զաչեմ զքեզ վասն այնո  
 րիկ սիրոյ քոյ. որով զիս ամբարիշտս սիրեջ  
 հաճեցար. մինչ զի ետուր զքեզ առ 'ի  
 դատիլ. առ 'ի ձաղիլ. և առ 'ի խաչիլ.  
 որպէս զի պատուականաւ մահուամբ քով.  
 զմահն հոգւոյս սպանիցէից. պատուակա  
 նի արեանն քոյոյ հեղմամբ. զաղտս հոգոյս  
 լուանայցէից. դառնութեամբ լեղւոյն ըմ  
 պեցէլոյն զքաղցրութիւնն յաւիտենակա  
 նի կենին ինձ արբուցանիցէից. կապանօք  
 քովք տը յն, զկապանս մեղաց իմոց խղից  
 էից. վերօք նբ մարմնոյ քոյ. զմմ վերս  
 իմ բժշկիցէից. նա և թուքն, ձաղանն.  
 ապտակն. փշեայ պսակն. բեւեռն. գե  
 ղարդն. նախատինք խաչին. և տագնապ  
 մահուան քոյ. զի 'ի համայնից տանջանաց  
 դժոխոցն ազատիցէին. և մասնակից զիս  
 յաւիտենականաց փառացն առնիցէին. կա  
 տարեա՛ զայս ամ տը յն որով հետե զայս  
 քան. և զայսպիսի կրեցիք վասն իմ առի  
 հասանիլ իմ յայտոսիկ խոստմունս, զի դու  
 ես տը իմ և ամ իմ, որ կհաս և թագա  
 ւորես 'ի յաւիտեանս յաւիտենից. Լ. մէն:

Սրտածուկի. Բ. Էրորդ Իվերա Հարչարանացի ճի.  
Հռոմէոս ընթացման որեւորեւ.

այնժամ կալան զանմեղագոյնն գա  
ռըն այն զյն քս. Լարկին զնա 'ի  
բանտ. բայց ո՛ կարէ լեզուաւ պատ  
մել. կամ ո՛ կարէ գրչաւ գրել. Թէ զոր  
քան. կամ զորպիսիս տանջանս կրեաց  
մեղրածորանն յն. նախ քան զարկանէն  
զնա 'ի բանտ. Ո՛հ Թէ ուն գազանաբա  
րոյքն այնոքիկ յարուցեալ 'ի վերա՛ն մեղ  
գառանն սկսան պատառաւտել զմբ մար  
մինն նորա. Ո՛հ Թէ որ քան բռնցիս ե  
տուն. որ քանիցս աքացահարեցին. Սմանք  
փետէին զհերսն. ոմանք քարշէին զմորուսն  
ոմանք արկանէին զհող զգլխովն. Սմանք  
ապտակէին զայն անային երեսն. Սմանք  
կապէին զհրաշարար ձեռնն այնքան պինդ.  
մինչ զի արիւն յորդառաա հեղանիւր 'ի  
ձեռաց. Ո՛հ ողբալի ճաշակ. Ո՛հ սգալի  
տեսութիւն. Լըդ. զինչ ասէիր արդեօք  
ո՛վ հոգի իմ. եթէ յայնժամ անդէիր ե  
ղեալ. և տեսանէիր զայս ամ անդ մտք  
մնաւոր. աչօք զոր այժմ տեսանես աստ  
մտացդ աչօք. Օ ինչ ասէիր արդեօք ո՛վ  
հոգի իմ. յորժամ տեսանիցէիր բարձեալ  
և բեռնեցեալ տուամբ և շղթայիւք ստեղ  
ծողն երկնի և երկրի. որ միայն կարէ ա  
զատել զմեզ յամենից կապանաց. Օ ինչ  
ասէիր, եթէ տեսանէիր ուն զգող ըմբռ  
նեցեալ

նեցեալ նա, որ եկն առ ի բառնալ զմեղս  
աշխարհիս:

**Մ**ասն երկրորդ. Սեորոս եհատ զական  
ջըն մաղքոսին. իսկ յժ առողջացոց.  
յետոյ առ ամբոխն ասաց. Ի կեալքէք ըմ  
բռնել զիս, ում զգող. բայց այս է ժամն  
ձեր. և կարողութիւնն խաւարաց. Բայ  
ի. իրք գոն զարմանալիք. Լախ քի բա  
րութիւնն. որ ոչ չարին զչար այլ չարին  
զբարի հատուցանէ առողջացուցանելով  
զականջն մաղքոսի. Իրկրորդ. խստու  
թիւն նոցա. որք տեսանելով զայն երկուս  
մեծամեծ հրաշն. ոչ կամեցան դառնալ  
ի մեղաց. Իրկրորդ. զարմանալինէ անճառ  
խոնարհութիւնն քի. որ ոչ միայն էառ  
զկերպ ծառայի. ոչ միայն նմանեցաւ մե  
ղաւորաց. այլ և տուաւ ի ձեռս իշխանա  
ցըն խաւարաց, այսինքն դիւաց, ում զի ի  
ձեռս պաշտօնէից իւրեանց ընդ դէմ ան  
մեղագոյն գառին, զոր ինչ կամէին առնի  
ցէին. Իւս յոր տուաւ ի ձեռս դիւաց,  
բայց այսու պայմանաւ. զի մի կարիցէին  
զրկել զնա ի կենաց. բայց անայինն յժ  
մատնեաց զինքն ի ձեռս նոցա. ում զի ոչ  
միայն տանջիցիւր, այլ և մեռանցիւր ի  
ձեռս կամարար պաշտօնէիցն նոցա:  
Բայ ժամ տես ով մեղաւոր հոգի իմ. թէ  
որպիսի ստորնագոյն խորս խոն. րհութե  
էջ վասն քո այն անային բարձրութիւնն.  
Իսկ դու ոչ կամիս խոնարհիլ ով հող և  
մոխիւր

մոխիր. այլ կամիս հանդոյն սատանայի  
բարձրանալ.

Սասն երրորդ. Յայնժամ աշակերտքն  
թողեալ զյս. փախեան ամենեքեան.  
Ո՛վ հոգի իմ հայեաց 'ի սիրականն քո յս,  
տրտում և միայն. Թողեցեալ յաշակերտաց.  
և շրջապատեցեալ 'ի Թշնամեաց. Ո՛հ Թէ  
որ քան ցաւագին սրտիւ կարէիր ասել ո՛վ  
իմ բարի յս. Հայէի յաջմէ տեսանէի. և  
ոչ որ յաշակերտացս ճանաչէր զիս. զի ա-  
մենեքեան փախեան յինէն. Ո՛ւր է այն  
մեծ խոստմունքն քո ո՛վ պետրոս. որ սա  
կաւ ինչ առաջ ասացեր. Եթէ ամենեք  
եան գայթակղիցին սակայն ես ոչ գաթակ  
ղիմ. Օ՛հ եղև քեզ որ այդ քան 'ի հե-  
ռուստ հետևիս, ել ընդ առաջ. և սփո  
փեա՝ սակաւիկ մի զվարդապետն քո.  
Ո՛յ ինչ ասպերախտիս. զի բազմիցս նմա  
նեցայ ես աշակերտացս այսոցիկ, քան զի  
մինչ պատահին գործառութիւնք ի՛ք  
ըստ հաճոյից իմոց. և քանի որ աջողին  
իրքն ըստ կամաց իմոց. ծառայ եմ ւայ ու  
րախ դիմօք. բայց յորժամ ոչ յաջողին  
ըստ կամաց իմոց. յայնժամ հեռանամ 'ի  
բարեաց գործոց և յայ. Սինչ ունիմ յա-  
ղօթսիմ զարտասուս և զքաղցրուի սրտի կա-  
միմ աղօթել. իսկ յորժամ անժ զայսոսիկ բառ-  
նայ յինէն. իսկոյն յաղօթելոյ դադարիմ.  
Տես ո՛վ հոգի իմ. Թէ որ քան մեծ է զօ-  
րութիւնն աղօթից. քան զի եթէ ոչէին

ննջեալք. այլ յաղօթսէին կացեալք ըստ  
հրամանի Թն որ ասաց. Յաղօթս կացէք  
ոչ փախիցէին. և ոչ թողիցէին միայն ըզ  
վարդապետն իւրեանց:

ԲՆԴԻՒՆ.

Հայեաց ով Թն. հայր Եւ ամենակարօղ  
Թն. իմեղուցեալ ծառայս քո. զոր  
Թնն իմ յն քո. և որդին քո միածին. իւ  
րով պատուականաւ գնեաց արեամբ.  
ԲՆԴԻՒՆ ձայն արեանն քի աղաղակէ առ քեզ  
ի խաչէն հայցելով զթողութիւն մեղաց  
իմոց. Հայեաց յերեսս օծելոյ քոյ, որ  
նստի ընդ աջմէ քո. և բարեխօսէ վասն  
իմ. վասն նորա լուր ինձ հայր երկնաւոր  
որ լսեաց քեզ. և հնազանդ եղև քեզ մինչև  
իմաս, և մինչև իմաս խաչին: ԲՆԴԻՒՆ  
հայր Եւ զվէրս իմ. զի աղաչեմ զքեզ վն  
վիրաց նորա. որ զվէրս իւրս ուն զբերա  
նս արարեալ. նոքօք աղերեսէ զքեզ վասն  
իմ: ԲՆԴԻՒՆ հայր. իրաւի զի մեղայ քեզ. և  
մեղք իմք բազումքն յոյժ: ԲՆԴԻՒՆ զի  
ևս միածին որդին քո մեռաւ առ իջա  
ւել զմեղս իմ: ԲՆԴԻՒՆ կշռեմ զմեղս իմ  
ընդ արդեանցն մահուանն որդւոյ քոյ և  
տես. եթէ մեղք իմք բազումք և ծանօնք  
են քան զարդիւնսն մահուանն որդւոյ  
քոյ. զիս դատապարտեմ ի դժոխս. զոր  
մեղօք իմովք արդիւնաւորեցայ: ԲՆԴԻՒՆ  
եթէ արդիւնք մահուան նորա ծանօնք

և բազումք են քան զմեղս իմ. անցո՛ղին և  
զմեղս իմ. ( ) Ե՛հնեսցէ զքեզ լեզու իմ.  
գովեսցէ զքեզ բերան իմ. սիրեսցէ զքեզ  
սիրտ իմ. և երկիրպագցէ քեզ հոգի իմ.  
վասն առատ ողորմութեան քոյ՝ ի յաւի  
տեանս յաւիտենից ամէն:

ՍԽԱԾՈՒԹԻՒՆ Զ. ԵՐՈՐԴ. Հ} ՊԵՐՏԻՍ ԳՐԻԳՈՐԻՍ.  
ՉԲԼԱԳՈՍ Ի ԳՐԱՆԻՆ ՍԻՆՈՅ ԳՈՏԻՆՈՅԱՊԵՐԻՆ.

Յայնժամ ածին զքս՝ ի տունն աննայ  
քահանայապետին. և անտուստ ի  
տունն Կայիափասու: Բսէ՛ քահա  
նայապետն ցքս: Երդ մենցուցանեմ զքեզ  
յմծ կենդանին. զի ասացես թէ՛ դու  
ես որդին ան: Բսէ՛ քս. այո՛ ես եմ: Սախ  
լուեաց քս և ոչ ես պատասխանի. զի ոչ  
էին արժանիք պատասխանելոյ. զի յառաջ  
մէ ասացեալէր ինքն: Սի տայք զսրբու  
թիւն շանց. Երկրորդ, առ ի տալ մեզ  
զօրինակ համբերութեան: Օհ նախ ի  
տունն աննայի բազումք սուտ վկայեցին  
զնմանէ՛ և նա՛ ոչ պատասխանեաց. և այսու  
էցոյց մեզ. թէ պարտէ լուել և համբերել  
չարաբանութեան: Իսկ յորժամ երդմե  
ցուցին զնա՛ յանուն ան. յայնժամ ոչ լու  
եաց. այլ պատասխանի ետ և ասէ: Ես եմ  
որդին ան, թէպէտ գիտէր զի այսու պա  
տասխանատրութեամբս կատաղելոցէր քա  
հանայապետն: Եւ այսու ուսոյց մեզ.  
82  
Թէ

Թէ յորժամ անարդանքն վն մեր միայնեն,  
պարտէ լուել և համբերել: Իսկ առ 'ի  
պատուել զանունն ւայ. պարտէ զճշմարիտն  
ասել: Թէպէտ անտուտ հետեիցի մահ  
և չարչարանք: Ուստի աստ մտածեա՛ւ ով  
հոգի իմ: Թէ որ քան հեռի ես 'ի շուղէն  
քի: Սի յորժամ աշակերտն. որդին. և  
ծառայքն քո վշտացուցանէ զքեզ. մեծա  
պէս պատժես զնմ: Իսկ յորժամ տեսա  
նես զնոսա անցեալ զպատուիրանաւն ւայ.  
յայնժամ ոչ հոգաս:

Սաան երկրորդ: Իսաց Թորն մեր ցքա  
հանայեապետն. և որք անդ կային:  
Իմէն ասեմ ձեզ. տեսանիցէք զորդի մար  
դոյնստեալ ընդ աջմէ զօրութեն ւայ: Ս որ  
լուեալ քահանայապետն. պատառեաց  
զհանդերձն իւր և ասէ: Հայհոյեաց.

Սահապարտէ: Ստածեա՛ւ զպատճառս.  
Թէ վասն էր ասաց յն զբանս զայս: Սախ  
առ 'ի յայտնել զածուլութիւնն իւր, և կա  
մէր ասել այսպէս: Թէպէտ այժմ աստ  
տեսանէք զիս անարգ. և արհամարհե  
ցեալ. սակայն եկեսցէ ժամանակ, յորում  
նստցիմ ընդ աջմէ հօր 'ի դատել զկենդա  
նիս և զմեռեալս: Իրկրորդ. ոմ զի լսե  
լով զանուն դատաստանին ւայ. դադարեց  
էին 'ի չարութենէ իւրեանց: Ո՛հ Թէ ոմ  
նմանիս այսոցիկ քարասրտիցս ով հոգի իմ.  
որով հետեւ լսելով քո զահարկու օրն դա  
տաստանին: Ոչ վախես. որպէս Թէ դա  
տաստանն

տառտանն այն ոչ է լինելոց վասն քո:

**Ս**ասն երրորդ, ի այնժամ ամենեքեան  
սկսան թքանել յերեսն. ծածկէին զե-  
րեսն. ձաղէին զգլուխն և ասէին. Սար-  
գարէացիք. ո՞վ է որ հարկանէ զքեզ.  
Ս՛հ զարմանալի խոնարհութիւն. Ս՛հ  
հիանալի համբերութիւն որդւոյն նոյ.  
Բայ ինձ ո՞վ յնազօրեցի. ո՞վ գեղեցկու-  
թիւն հրեշտակաց, թքանելոյ երեսէր ե-  
րեսն քո. Ս՛հ ցաւոյս. յորժամ մարդիկ  
կամին թքել. շրջեն զերեսն իւրեանց. և  
թքեն յանարգագոյն անկիւնն տան. Բայց  
քայքայեալ փլիցի պալատն կայիափայ.  
ուր ոչ գտանի տեղի անարգագոյն քան  
զնձային երեսն քո, առ որ ամենեքեան  
թքանեն. Բրդ. որ ով հետեւ այսքան խո-  
նարհեցաւ նձն փառաց, զի արդ. ոչ խո-  
նարհիս դու. ո՞վ հող և մոխիր:

**Չ**որրորդ մասն. ի՞նչտ այսորիկ մտածեա՛  
ով հոգիեկ իմ զբազում տանջանս, և  
զանհուն չարչրանս. զորս կրեաց երկնաւոր  
փեսայն քո յն. ( ) ի զկնի թքելոյն յերեսն  
և բազում նեղութեանն. զոր իտունն կայ  
եափասու յայնմիկ գիշերի կրեաց. տուաւ  
իպահեստ ի ձեռն զինուորացն մինչև ցա-  
ռաւօտն. Բայց ո՞ կարէ պատմել. կամ ո՞  
կարէ գրել զնեղութիւնն, զոր յայսմիկ գի-  
շերի կրեաց յնազօրեցին: Բայն զի այն  
անողորմք զինուորքն զծաղրառնելն, և զձա-  
ղելն զնա՛ համարէին զբօսան. և տանջելն  
84  
զնա՛,

զնա՛, հանգստութիւն իւրեանց համարէին։  
 Ո՛հ թէ զորքան ապտակս ետուն նմա՛,  
 Ո՛հ թէ քանիցս անգամ տարածեցաւ յեր  
 կիր առ իննջել և հանգուցանել զջախջա  
 խեցեալ մարմինն իւր. բայց անգութք զին  
 ուորքն ոչ տային զհանգիստ։ Ո՛հ գիշեր  
 գազանաբարոյ. ո՛հ ան հանգիստ գիշեր.  
 յորում ո՛վ յիմ ոչ կարէիր հանգչիլ. ոչ  
 ևս հանգչէին նոքա՛, որք զանհանգստութի  
 քո. հանգիստ իւրեանց համարէին։ Ո՛վ  
 յիմ բարի, վասն այսորիկ արարեր զգիշերն  
 զի ի տունջեան վաստակեալք զգայեարանք  
 ինմին հանգեցեն. բայց ի գիշերիս այս  
 միկ. յորում անա. կայեափառ. և համայնք  
 հրէայք ննջէին, համայնք զգայեարանք  
 քոյք տանջէին։ Օ՛ ի զմբ մարմինդ քո  
 ձաղէին, զհոգիդ քո վշտանգէին. զձեռսդ  
 քո կապէին. զերեսդ ապտակէին. ի դէմդ  
 թքանէին. զգլուխդ հարկանէին. և զոչսդ  
 քո կապէին։ Ո՛հ թէ որքան տարածայնք  
 և անմիաբանքէին ի գիշերիս այսմիկ ձայնք  
 հրեշտակաց և մարդկան։ Օ՛ ի հրեշտակ ք  
 աղաղակէին և ասէին. սբ. սբ. սբ. տօր զօ  
 րութեանց։ Իսկ հրէայքն ասէին. ի խաչ  
 հան զդա՛. ի խաչ հան զդա՛. Ո՛վ հրեշ  
 տակ ք արքայութեան. ոնկ արդեօք համ  
 բերեցիք, յորժամ տեսանէիք այսքան ան  
 արգեցեալ իյերկրի զայն. զոր այդքան  
 պատուէք իյերկինս։

**Ո՛վ** յն քս գեղեցկութիւն արքայութեն  
երկնից։ Օ՛հնչ դատապարտութեան  
բանս արարեր։ զի դատապարտեցար։ զինչ  
մեղս արարեր։ զի մեղսապարտ եղեր։  
**Որպիսի** չար 'ի քեզ գտաւ։ զի չարաչար  
մեռար։ Իրաւի դու ոչէիր արժանի դա  
տապարտութեան, իրաւի զոչ ինչ մեղաց  
արարեր։ Իրաւի ոչ ինչ չար 'ի քեզ գտաւ  
այլ զդատապարտութիւնն։ զմեղսապար  
տութիւնն։ և զչարութիւնն 'ի յանձդ ա  
ռեր։ զի զիս ապերախսս յայսցանէ ազա  
տիցէիր։ վասն որոյ տամք քեզ զփառս և  
զպատիւս։ յաւիտեանս յաւիտենից։ Լ'մէն։

**Ս**րբաւորութիւն եօթն երորդ թիւովս սրբանա  
լոյն պեպրոսի զբրիստոս։



այր պետրոս 'ի սրահն քահանայեա  
պետի։ առ որ եհարց աղախինն և  
ասաց։ Ի՞նչ դու յաշակերտացն քի  
ես։ Իսկ նա՛ երկցս ուրացաւ և ա  
սաց։ Ո՛չ ճանաչեմ զնա։ Տես թէ ոմ  
պատերազմին 'ի սիրտն պետրոսի սէրն՝ և  
երկիւղն ընդ միմեանց։ Սի սէրն վարդա  
պետին ստիպէր զնա՛ մեռանիլ ընդ վար  
դապետին։ Իսկ երկիւղ մահուանն զօրէր  
զնա՛ զի թաքչիցէր։ Իայց սակայն 'ի վախ  
ճանի այնքան զօրացաւ երկիւղն։ մինչ զի  
թուացաւ զնա, ոչ միայն մի՛ անգամ այլ և  
երկիցս

Երկիցս և երկիցս անգամ ասելով. Ո՛չ գի  
 տեմ և ո՛չ ճանաչեմ զայրն այն. Տե՛ս ո՛վ  
 հոգի իմ Թէ ո՛ւրեհաս խոնարհութիւնն  
 որդւոյն նյ. քան զի. այնքան անարգ. հա  
 մարեցաւ յն. մինչ զի պետրոս ո՛չ համարէ  
 զնա՝ արժանի գոլ վարդապետ իւր. այլ  
 մանաւանդ երդմամբ հաստատէ. Թէ ո՛չ  
 է աշակերտ նորա. Ո՛վ պետրոս պետրոս.  
 իրաւի այդքան անարգէ այրդ այդ. զի  
 ամսթ համարես զքեզ գոլ աշակերտ նորին  
 Ս'եծաւ պատճառաւ գանգատեաց յա  
 ռաջմէ մարգարէիւն և ասաց. Ի՞ս որդւն  
 եմ և ոչ եմ մարդ. նախատինք մարդկան  
 և արհամարհանք ժողովրդեան. Ի՞ստ  
 մտածեա ո՛վ հոգի իմ զչորութիւն հպար  
 տութեան որ պատճառ եղև անկմանն պե  
 տրոսի. Օ՛ի պարծեցաւ և ասաց. Ի՛թէ  
 ամենեքեան՝ Թողցեն զքեզ. սակայն ես  
 ո՛չ Թողից. Ի՛ւ ևս մտածեա՝ զզորութիւն  
 աղօթից. քան զի եթէ պետրոս ոչ էր նրն  
 ջեալ 'ի պարտիզին, այլ անսացեալէր բա  
 նիցն քի որ ասաց. Յաղօթս կացէք. զի  
 մի՛ անկանիցեք 'ի փորձութիւն. գուցէ  
 ոչ էր անկեալ. Ի՛րրորդ. տես Թէ որքան  
 պարտիմք ահիւ և դողութեամբ կալ. զի  
 եթէ սիւնն երկնից շարժեալ դողաց. ա  
 պա՛ զինչէ. լինելոց մեզ Թշուառիցս.

Ս'աան երկրորդ. Յետ ուրանալոյն վաղ  
 վաղակի խօսեցաւ հաւն. և դարձեալ  
 յի հայեցաւ 'ի պետրոս. Ս'տածեա հոգի  
 իմ.

իմ. Թէ որ քան բազմացաւ վիշտն և դառ-  
 նութիւնն սրտին յի, յորժամ ետես զինքն  
 վաճառեալ յուրայի. Թողեցեալ յայլոց  
 աշակերտաց: Իսկ այժմ ևս այսքան տգե-  
 ղաբար ուրացեալ եղև 'ի սիրելոյ. և  
 'ի գլխաւոր առաքելոյն: Իրաւի առաւել  
 կսկծացոյց զսիրտն քի. այս ուրացումն պե-  
 տրոսի. քան Թէ պլբ համայնք տանջանք  
 Ո՛հ Թէ որ քան ցաւագին սրտիւ ասէր  
 վշտանգեալն յս. Բն ունէի. Թէ ոք  
 մխիթարիցէր զիս և ոչ գտաւ. Բարեկամք  
 և ծանօթք իմք հեռիք եղէն յինէն:  
 Ստածեալ Թէ ոպ 'ի խօսիլ հաւոյն շար-  
 ժեալ 'ի գոյթ յս, հայեցաւ 'ի պետրոս. և  
 սկսաւ խօսիլ ընդ նմա՝ սրտէ 'ի սիրտ և  
 ասել. Սի է պետրոս որ զիս ուրացար:  
 զինչ չար 'ի յիս տեսեր. ուրէ հաւատ քո.  
 ուրէ հաւատարմութի քո. Ո՛ւրէ սէրն քո  
 դէպ 'ի յիս. ուրէ այն մեծ խոստումն ոչ  
 երբէք Թողլոյ զիս: Ո՛չ ապաքէն բաւա  
 կանքէին ցաւք իմ ինձ. զի ևս դու  
 եդեր զցաւս 'ի վերայ ցաւոցս. Բյսե  
 բարերարութիւնն քո. զոր հատուցանես  
 փրկչին քո. որ հանեալ զքեզ 'ի չնչին ա-  
 րուեստէ ձկնորսութեան, արարի իշխան  
 և գլուխ բոլոր ժողովրդեան իմոյ. Բրդ-  
 խորհեաց ով հոգի իմ. Թէ որ քան մե-  
 ծաւ պատճառաւ կարէ գանգատել քո  
 գբէն. և ասել. քեզ զոր պետրոսի ասաց:  
 Ստան երրորդ. ի այնժամ յիշեաց պե-  
 տրոս

արոս զբանն յի. և ելեալ արտաքս ելաց  
 գառնապէս: Բորդ. ուր յատկութիւն ա-  
 րեգականնէ հալէ զպաղն. և իջուր լու-  
 ծանել. այսպէս և հայեցումն քի արեգա-  
 կան արդարութեան. զպաղուցեալ սիրտն  
 պետրոսի հալեալ դարձոյց իջուրս արտա-  
 սուաց: Այր պետրոս և ասէր: Օ ինչ կա-  
 միս տը զի արարից: Գոյ արդեօք յոյս  
 թողութեան մեղացս: Բախէր զկուրծն.  
 և ասէր ինքն ինքեան: Օ ինչ արարեր ով  
 պետրոս. զով ուրացար: Օ ով քամահե-  
 ցեր. վայ ինձ վայ. զոր որդի այ դաւա-  
 նեցի. զնոյնն ուրացայ: Որ մինչ զոտս կա-  
 մէր լուանալ. անարժան զիս համարելով  
 ոչ թոյլ տայի լուանալ. զնոյնն այսօր ա-  
 նարժան համարեցի թէ վարդապետիմ  
 իցեր ասելով. Ոչ ճանաչեմ զնա. ճողէր  
 զմորումն. ողբայր. և ասէր: Օ ինչ արա-  
 րից եղկելիս. Ուրացայ զտուօղն թողու-  
